

Բանալի բառեր՝ աշխատանքի բաժանում, ներմուծում, արտահանում, արտաքին առևտուր, ԵԱՏՄ, ապրանքային կառուցվածք:

**ՀՏԴ 339:338(475.25)**

## ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեմա՝

**Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում**

**Վոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՀԴՏՀ ՄՏՀ ամբիոնի հայցորդ

Գիտական ղեկավար՝

**Չոյա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացներում երկրի տեղի ու դերի մասին հավաստի տվյալներ կարող են հաղորդել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների փոխադարձ առևտրի քանակական և որակական պարամետրերը: Փոխադարձ առևտրի աշխարհագրական ու ապրանքային կառուցվածքի և ծավալների ուսումնասիրությունը հիմքեր են ստեղծում համակարգային հետազոտության համար: Այսպես, 2009-2017 թթ., Ռուսաստանում արտահանման ծավալների միջին տարեկան աճը կազմել է 7.9%, սակայն, եթե 2009-2013 թթ. տարեկան աճը միջինում կազմել է 20.1%, ապա հաջորդող տարիներին գրանցվել է արտահանման ծավալների անկում, որը 2014-2016 թթ. հասել է մինչև 20.1%-ի: 2017 թ. սակայն, արտահանումը, նախորդ տարվա համեմատ աճել է 0.5%-ով: Նմանատիպ պատկեր գրանցվել է նաև Ղազախստանում և Բելառուսում. 2009-2016 թթ. երկրները գրանցել են միջինում 2.1% և 4.7% առևտրի աճ, սակայն սկսած 2012 թ. արտահանման ծավալները կրճատվում են (առանձին տարիներին նվազման տեմպերը հասնում են մինչև 42%) (Աղյուսակ 1):

Պատկերն ավելի բարձր է Ղրղզստանում ու Հայաստանում: Չնայած վերջիններին արտահանման փոքր ծավալներին, Ղրղզստանում արտահանման աճ գրանցվել է 2009-2014 թթ., և միայն 2015 թ., նախորդ տարվա համեմատ արտահանման ծավալները կրճատվել են 26%-ով: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ուսումնասիրվող ժամանակահատվածում արտահանման անկում չի գրանցվել: Միևնույն ժամանակ, բազիսային 2009 թ. համեմատ, Ռուսաստանի և Ղազախստանի արտահանման ծավալները նվազել են համապատասխանաբար 5.4 և 14.8%-ով: ԵԱՏՄ մյուս երկրներում գրանցվել է արտահանման ծավալների աճ, մասնավորապես Հայաստանում՝ 2.6 անգամ, Բելառուսում՝ 10% և Ղրղզստանում՝ 16.7%:

Աղյուսակ 1.

**ԵԱՏՄ երկրների արտահանման ու ներմուծման ծավալները 2009-2016թթ. (վրդ. ԱՄՆ դոլար)<sup>1</sup>**

Երկիրը	Արտահանում							
	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ռուսաստան	301.8	397.1	517	524.4	527.3	497.8	343.9	285.5
Ղազախստան	43.2	57.2	88.1	92.3	84.7	79.5	45.9	36.8
Բելառուս	21.3	25.4	41.4	46.1	37.2	36.1	26.7	23.5
Հայաստան	0.7	1.0	1.3	1.4	1.5	1.5	1.5	1.8
Ղրղզստան	1.2	1.5	2.0	1.7	1.8	1.9	1.4	1.4
Երկիրը	Ներմուծում							
	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ռուսաստան	170.8	228.9	306.1	316.2	314.9	286.6	182.8	182.3
Ղազախստան	24.4	24.0	38.0	44.5	48.8	41.3	30.6	25.2
Բելառուս	28.6	34.9	45.8	46.4	43.0	40.5	60.3	27.5
Հայաստան	3.2	3.8	4.1	4.3	4.3	4.2	3.3	3.2
Ղրղզստան	2.9	3.2	4.3	5.4	6.0	5.7	4.1	3.8


2009-2016թթ. ԵԱՏՄ երկրներում գրանցվել է նաև ներմուծման ծավալների աճ. Ռուսաստանում միջինում 3.6%, Բելառուսում՝ 5.1%, Ղազախստանում՝ 8.6%, Հայաստանում՝ 0.7%, իսկ Ղրղզստանում՝ 5.9%: Սակայն ներմուծման ծավալների աճ հիմնականում գրանցվել է 2009-2012 թթ., իսկ 2012 թ. հետո ներմուծման ծավալները կրճատվում են (կրճատման տեմպերը ամենաբարձրը եղել են 2016 թ. Բելառուսում՝ 54.4%):

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից <http://www.trademap.org> կայքի տվյալների հիման վրա

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ երկրների արտահանման և ներմուծման ծավալները վերջին տարիներին չեն գերազանցում համապատասխանաբար 350 և 250 մլրդ. ԱՄՆ դոլարը, այն դեպքում, երբ 2012 թ. արտահանման ծավալները հասնում էին 666 մլրդ., իսկ ներմուծման ծավալները 417 մլրդ. ԱՄՆ դոլարի: Այդ նույն տարում ԵԱՏՄ երկրների արտահանումն ու ներմուծումը կազմում էր համաշխարհային արտահանման 3.6%-ը, իսկ ներմուծման 2.3%-ը: 2016 թ. ինտեգրացիոն խմբավորման տեսակարար կշիռը համաշխարհային առևտրում կրճատվել է մինչև 2.3% և 1.5%, որից համապատասխանաբար 1.8% և 1.1%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին:

Չնայած ԵԱՏՄ երկրների արտաքին առևտրի ոչ մեծ ծավալներին, ավելի անհանգստացնող է այն, որ երկրների մեծ մասը ավելի սերտ առևտրային հարաբերություններով կապված է երրորդ, այլ ոչ ԵԱՏՄ գործընկերների հետ (գծապատկեր 1):

**Գծապատկեր 1. ԵԱՏՄ երկրների արտաքին առևտրին անդամ և այլ երկրների հետ 2016թ. (%)<sup>2</sup>**



Ինչպես տեսնում ենք, միայն Բելառուսի առևտրին է գրեթե կիսով չափ կապված ԵԱՏՄ երկրների հետ: Մյուս երկրների արտաքին առևտրում «այլ երկրներն» ունեն ավելի մեծ կարևորություն: Հատկանշական է, այն, որ չնայած ԵԱՏՄ բոլոր երկրները առևտրային հարաբերություններով խիստ կապված են Ռուսաստանի հետ, սակայն վերջինիս առևտրի միայն 9.3%-ն է կապված ԵԱՏՄ երկրների հետ: Այսպիսով, թեև համաշխարհային առևտրային հարաբերություններին ԵԱՏՄ երկրները չունեն բավարար մասնակցություն, այնուամենայնիվ, ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում դրանց առևտրի ծավալները ևս գոհացուցիչ չեն:

Ամեն դեպքում, առավել կարևորվում է ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների փոխադարձ առևտրի ծավալների ուսումնասիրությունը: Թեև Հայաստանը և Ղրղզստանը ԵԱՏՄ անդամ են դարձել միայն 2015 թ., այնուամենայնիվ հարկ ենք համարում վերջիններիս առևտրը ԵԱՏՄ գործընկերների հետ ուսումնասիրել սկսած 2010 թ., երբ կնքվեց Մաքսային միության համաձայնագիրը:

Այսպես, 2010-2016 թթ. ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրը աճել է միայն Մաքսային միության համաձայնագրի կնքման տարում 45.3%-ով: Հետագա տարիներին գրանցվել է համախառն առևտրի անկում տարեկան միջինը 6.5%-ով (Աղյուսակ 2) :

**Աղյուսակ 2. ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրը 2010-2016թթ. (մլրդ. ԱՄՆ դոլար)<sup>3</sup>**

Երկիրը	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան	0.25	0.3	0.29	0.35	0.32	0.3	0.4
Բելառուս	10.5	15.3	17.1	17.7	16.6	11.0	11.3
Ղազախստան	3.5	8.1	7.6	6.6	7.2	5.1	3.9
Ղրղզստան	0.4	0.6	0.6	0.5	0.6	0.4	0.4
Ռուսաստան	30.1	40.7	38.4	36.6	32.7	28.8	26.5
<b>Ընդամենը ԵԱՏՄ</b>	<b>44.8</b>	<b>65</b>	<b>63.9</b>	<b>61.8</b>	<b>57.4</b>	<b>45.6</b>	<b>42.5</b>

Այդ անկման մեջ «մեղքի» ամենամեծ բաժինը ընկնում է Ռուսաստանի վրա, քանի որ մնացած երկրներում փոխադարձ առևտրի ծավալները նկատելի անկում չեն ապրել: Այսպես, ԵԱՏՄ երկրների հետ Հայաստանի փոխադարձ առևտրի ծավալները 2016 թ., 2010 թ. համեմատ, աճել են 60%-ով, Բելառուսինը՝ 7.6%-ով, Ղազախստանինը՝ 11.4%, Ղրղզստանինը, 2011-2014 թթ. որոշակի աճ գրանցելով, 2016 թ. վերադարձել է 2010 թ. մակարդակին, իսկ Ռուսաստանի առևտրը կրճատվել է 12%-ով: Ընդ որում, եթե հաշվի առնենք, որ 2011 թ., Նախորդ տարվա համեմատ Ռուսաստանի և ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրը աճել

<sup>2</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից


[http://www.eurasiancommission.org/ru/act/integr\\_i\\_makroec/dep\\_stat/tradestat/tables/intra/Documents/2016/12/201612\\_8\\_1.pdf](http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables/intra/Documents/2016/12/201612_8_1.pdf) կայքի տվյալների հիման վրա:

<sup>3</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից [www.trademap.org](http://www.trademap.org) և [www.eurasiancommission.org](http://www.eurasiancommission.org) կայքերի տվյալների հիման վրա:

Եր 35.2%-ով, ապա 2016 թ. անկումը հասնում է 34.8%-ի: Փաստորեն, կարելի է պնդել, որ Միասնական տնտեսական տարածքի համաձայնագիրը դրական ազդեցություն չի թողել ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի ծավալների աճի վրա: Տարիների ընթացքում Եական դրական փոփոխության չի ենթարկվել նաև ինտեգրացիոն խմբավորման առևտրի աշխարհագրական բաշխվածությունը, ըստ որի Ռուսաստանին բաժին է ընկնում առևտրի 60%-ից ավելին, իսկ Հայաստանի և Արդգստանի բաժինները չեն հասնում նույնիսկ 1%-ի (Գծապատկեր 2): Սա պայմանավորված է նրանով, որ ԵԱՏՄ-ում դեռ պահպանվում են արտահանման հոսքերի անհամաչափությունները: Բոլոր երկրների արտահանումները կողմնորոշված են դեպի Ռուսաստան, իսկ միմյանց հետ արտաքին առևտրային հարաբերությունները թույլ են արտահայտված:

Փոխադարձ առևտրի ծավալների վերլուծությունը հաստատում է գրավիտացիոն մոդելի ազդեցությունը ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի ծավալների վրա: Իրոք, ԵԱՏՄ բոլոր երկրները մեծ չափով կողմնորոշված են դեպի Ռուսաստան: Ընդ որում, Ղազախստանը, որպես պատրաստի արտադրանքի արտահանող, շարունակում է մնալ խմբավորման շրջանակներում ամենաբազմ ինտեգրված երկիրը և հանդիսանում է Արդգստանից ամենաշատ ապրանք ներմուծողը: ԵԱՏՄ երկրներից որոշների միջև մեծ հեռավորությունը (օրինակ Հայաստան-Արդգստան) թույլ չի տալիս իրականացնել արդյունավետ արտաքին առևտուր, ուստի երկրները պետք է ավելի շատ կողմնորոշվեն դեպի կորպորացիոն կապերի հաստատումը, որը չի պահանջում ֆիզիկական շփում, օրինակ միջազգային աուսթրոսինգի մեխանիզմների միջոցով:

**Գծապատկեր 2.**  
**ԵԱՏՄ երկրների տեսակարար կշիռները խմբավորման համախառն առևտրում (%)<sup>4</sup>**



Կարևորում ենք նաև ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքի ուսումնասիրությունը: Այսպես, Հայաստանից ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալները 2016 թ. կազմել են 392.1 մլն ԱՄՆ դոլար, 58.7%-ը, բաժին է ընկնում միայն արտահանվող 10 ապրանքախմբերին, որոնք արտահանվում են միայն դեպի Ռուսաստան: Համախառն արտահանման 33.9%-ը բաժին է ընկնում պլոհոլային խմիչքներին, իսկ արտահանվող 10 ապրանքախմբերից 5-ը՝ գյուղմթերքին: Վերջին տարիներին կտրուկ ավելացել է նաև արտահանվող տրիկոտաժի, տեքստիլի, պատրաստի հագուստի և կոշիկների արտահանման բաժինը: Մասնավորապես, արտահանվող 10 ապրանքախմբերից 3-ը բաժին են ընկնում հենց վերոհիշյալ ապրանքներին և կազմում են դրա 8.3%-ը: Սակայն, համախառն արտահանման մեջ տեքստիլ արտադրանքի արտահանման բաժինը կազմում է 12.3%, ինչը 19.4 մլն. ԱՄՆ դոլարով ավելին, է քան նախորդ տարվա ցուցանիշը:

Եթե հաշվի առնենք, որ դեպի Հայաստան տեքստիլ արտադրանքի ներմուծումը 2016 թ., 2014 թ. համեմատ ավելացել է 28.7%-ով<sup>5</sup>, իսկ տեքստիլ արտադրանքի արտադրությունը 2016 թ., նախորդի համեմատ, նվազել է 3.6%-ով<sup>6</sup>, ապա կարելի է ենթադրել, որ Հայաստանից ԵԱՏՄ արտահանվող տեքստիլ արտադրանքը վերաարտահանման արդյունք է: Նույնախիսի պատկեր է նաև լոլիկի արտահանման ծավալներում: Այսպես, 2015 թ. Հայաստանից ԵԱՏՄ արտահանվել է 1.130 տոննա կամ 1.5 մլն ԱՄՆ դոլարի լոլիկ, իսկ 2016 թ. լոլիկի արտահանման ծավալները հասել են 36.041 տոննայի կամ 22.7 մլն ԱՄՆ դոլարի: Մինևույն ժամանակ, լոլիկի արտադրության ծավալները Հայաստանում 2016 թ., 2015 թ. համեմատ կրճատվել են 6.9%-ով (ընդուն արտահայտությամբ)<sup>7</sup>, իսկ ներմուծումը ավելացել է 3.8 անգամ (դոլարային արտահայտությամբ): Ընդ որում, ներմուծված լոլիկի 72.5%-ը բաժին է ընկնում Թուրքիային, ինչը 3.8 անգամ ավելին է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Փաստորեն, ՀՀ-ից ԵԱՏՄ արտահանվող լոլիկը, Թուրքիայից ներմուծված լոլիկի վերաարտահանման արդյունք է:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ից Հայաստան ներմուծմանը, ապա ներմուծվող 10 ապրանքախմբերին բաժին է ընկնում ներմուծման 59.4%-ը, որից միայն 40.4%-ը բնական գազին ու նավթամթերքին: Մեծ են նաև ցորենի (5.3%), այլումինի (4.3%), ձեթի (1.9%) ներմուծման տեսակարար կշիռները: Ներմուծվող 10 ապրանքախմբերի մեջ առկա են նաև տեխնոլոգիատար ապրանքներ՝ կապի միջոցներ (1.5%) և հեռուստացույցներ (1.1%): Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ երկրներից դեպի Հայաստան ներմուծումը 2016թ., նախորդի համեմատ, ավելացել է 8.7%-ով:

<sup>4</sup> Գծապատկերը կազմվել է Արդգստանի 4-ի տվյալների հիման վրա:

<sup>5</sup> Հաշվարկը կատարվել է հեղինակի կողմից ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, էջ 446-462:

<sup>6</sup> Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2016 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, էջ 5:

<sup>7</sup> Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2016թ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, էջ 10:

Այսպիսով, կարելի է պնդել, որ Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը օգտագործում են փոխադարձ առևտրի համեմատական առավելությունները, իսկ Հայաստանը և Ղրղզստանը դեռ թույլ են ինտեգրված միությանը: Կարելի է կարծել, թե մոտ ապագայում Հայաստանը և Ղրղզստանը ևս կունենան ավելի ակտիվ մասնակցություն (հաշվի առնելով նախորդ տարվա համեմատ առևտրի ծավալների ավելացումը), այնուամենայնիվ մինչ այժմ իրադրությունը գորացուցիչ չէ:

ԵԱՏՄ երկրների առևտրատնտեսական համագործակցության խորացմանը կարող է նպաստել արտահանման դիվերսիֆիկացիան, ճյուղային մասնագիտացման խորացումը, տեխնոլոգիատար ապրանքների արտադրությունը և մրցունակության բարձրացումը: Իհարկե սրանք դեռ ԵԱՏՄ գործունեության նախնական գնահատականներն են, քանի որ ինտեգրման խորացումը, ընդհանուր հիմնախնդիրների լուծումը, արտաքին առևտրի կարգավորման լրիվ ունիֆիկացիան թույլ կտան ստանալ սպասվող տնտեսական արդյունքը:

Միանշանակ է, որ ԵԱՏՄ երկրները ունենալով նույնատիպ տնտեսական կառուցվածք և արտաքին առևտրի հումքային ուղղվածություն (որը կարելի է ի դեպ համարել մրցունակ) պետք է մշակեն կորպորատիվ կապերի խորացման միասնական ծրագիր՝ հիմնված մասնագիտացման ծորացման, նորագույն տեխնոլոգիաների և գիտելիքների յուրացման, ինովացիոն արտադրության զարգացման, միասնական ինովացիոն համակարգի ձևավորման վրա, որը իր հերթին կհանգեցնի գործընկեր երկրների տնտեսությունների արդիականացման ծրագրերի հիմնական ռազմավարական դրույթների միասնականացմանը:

*Ներկայացվել է 15.02.2018թ.  
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*